ք.Վանաձոր 02.03.2026թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության» և «2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվության» վերաբերյալ հանրային լսումների

Հանրային լսումը սկսվեց ժամը 11:00-ին՝ Վանաձորի համայնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում:

Բացման խոսքով հանդես եկավ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյանը՝ ներկայացնելով հանրային քննարկումների նպատակը.

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 07 հունիսի 2016 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված կարգը, ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 84-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով՝ ***որոշվել է.***

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի /ՏԱՊ/ հաշվետվությունը ներկայացնել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների՝ 2026 թվականի փետրվարի 13-ից մինչև 2026 թվականի փետրվարի 27-ն ընկած ժամանակահատվածում:

2. Համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայքէջում տեղադրել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավեր https://vanadzor.am/content/3761 , ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:

3. Հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների օր նշանակել 2026 թվականի փետրվարի 27-ը՝ ժամը 11:00-ին:

4. Համայնքի ղեկավարի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի ներկայացուցիչ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Վահե Գրիգորյանին:

Վ.Գրիգորյանը ներկայացրեց Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի բյուջեի կատարողականը՝ նշելով նաև, որ այս պահին կատարվում է նաև 2025 թվականի բյուջեի կատարողականի արտաքին աուդիտ, և մոտ օրերս եզրակացությունը պատրաստ կլինի: Նա հավելեց, որ ավագանու նիստ գումարվելու դեպքում կատարողականը կներկայացվի ավագանու որոշմամբ հանդերձ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Եկամուտներ՝

Վանաձոր համայնքի 2025 թվականի բյուջեն եկամուտների գծով կատարվել է 72.9%-ով, բյուջեով նախատեսված 8138091.6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 5934990.4 հազար դրամ, որից՝

Վարչական բյուջեի մուտքերը նախատեսված 5198350.8 հազար դրամի դիմաց կազմել են 5117016.4 հազար դրամ՝ կատարվել են 98.4%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են 541022.9 հազար դրամով, որը հիմնականում պայմանավորված է սեփական եկամուտների և պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի ավելացմամբ:

Ֆոնդային բյուջեի մուտքերը նախատեսված 2939740,8 հազար դրամի դիմաց կազմել են 817974,0 հազար դրամ՝ կատարվել են 27,8%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 9092,6 հազար դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2025 թվականի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերի բացակայությամբ, բայց պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաները) նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 240916,6 հազար դրամով:

Սեփական եկամուտների գծով բյուջեն կատարվել է 95,5%-ով, նախատեսված 1817407,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1735893,2 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են 70771,9 հազար դրամով, որից

Անշարժ գույքից գույքային հարկերի գծով փաստացի մուտքը 188000,0 հազար դրամի դիմաց կազմել է 358980,8 հազար դրամ, կատարվել է 190.9%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 125993,2 հազար դրամով:

Փոխադրամիջոցներից գույքային հարկերի գծով փաստացի մուտքը 1010000,0 հազար դրամի դիմաց կազմել է 731372,2 հազար դրամ, կատարվել է 72,4%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 42908,9 հազար դրամով:

Տեղական տուրքերը նախատեսված 83341.0 հազար դրամի դիմաց կազմել են 97155.7 հազար դրամ, կատարվել են 116.6%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են 11893.7 հազար դրամով:

Պետական տուրքի գծով փաստացի մուտքը նախատեսված 40000.0 հազար դրամի դիմաց կազմել է 54506.9 հազար դրամ, կատարվել է 136.3%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1127,9 հազար դրամով:

Գույքի վարձակալությունից եկամուտները կատարվել են 71,6%-ով, նախատեսված 58450,0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 41832,2 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 2525,9 հազար դրամով:

Վարչական գանձումները (տեղական վճարներ) նախատեսված 400616,6 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 369245,9 հազար դրամ, կատարվել են 92.2%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են 1043,5 հազար դրամով:

Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-ի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները կատարվել են 91,5%-ով, նախատեսված 2000.0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 1830,1 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 90,1 հազար դրամով:

Այլ եկամուտները նախատեսված 35000.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 80969,4 հազար դրամ: Պետական բյուջեից համայնքին հատկացվել է 62265.6 հազար դրամի ընթացիկ դրամաշնորհ, որից 61410.0 հազար դրամը հատկացվել է սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովման համար, 855.6 հազար դրամը նախադպրոցական հաստատությունների դաստիարակների վերապատրաստման նպատակով և 6017,8 հազար դրամը գարնանացան աջակցության նպատակով: Նախորդ տարվա համեմատությամբ այլ եկամուտները նվազել են 107503,7 հազար դրամով, որը հիմնականում պայմանավորված է վերը նշված ընթացիկ դրամաշնորհի պակասեցման հետ:

Պաշտոնական դրամաշնորհների գծով բյուջեն կատարվել է 66,7%-ով, նախատեսված 6314687,0 հազար դրամի դիմաց հատկացվել է 4213200,5 հազար դրամ, որից

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսված 3370370,6 հազար դրամի դիմաց կազմել

է 3370550,8 հազար դրամ, կատարվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 469065,0 հազար դրամով:

Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) նախատեսված 4.575.6 հազար դրամի դիմաց կազմել է 4.575.4 հազար դրամ, կատարվել է 100%-ով, որը նպատակաուղղված է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար:

Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) նախատեսված 2939740,8 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 838074,3 հազար դրամ կամ կատարվել է 28,5%-ով, նախորդ տարվա համեմատությամբ աճել է 240926,6 հազար դրամով:

ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները նախատեսված 5997.0 հազար դրամի դիմաց կազմել են 5997.0 հազար դրամ, կատարվել է 100%-ով:

Կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքերը՝ տրամադրված արտաքին աղբյուրներից կազմել են 13703,5 հազար դրամ, նախորդ տարվա համեմատությամբ աճել է 7671,1 հազար դրամով:

Ֆոնդային բյուջեի փաստացի մուտքերը այլ եկամուտների մասով նվազել են 33803,8 հազար դրամով (ԴԱՀԿ):

Բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 982635,0 հազար դրամ:

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի գծով բյուջեն կատարվել է 119,4%-ով, նախատեսված 3356260,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4007983,8 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են 3325504,7 հազար դրամով:

Ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝

Վանաձոր համայնքի 2025 թվականի բյուջեն ծախսերի գծով կատարվել է 16.5%-ով, նախատեսված 9120726.6 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 1505571.1 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 3023720,3 հազար դրամով, որը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից փաստացի մուտքերի աճով:

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 1423241,0 հազար դրամի դիմաց կազմել են 1247566,9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 87,7%: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 277326,5 հազար դրամով:

- Տնտեսական հարաբերությունների բնագավառով նախատեսված 1626910.5 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են (-2741049.2) հազար դրամ կամ ֆոնդային բյուջեի գծով 1264198,6 հազար դրամի ծախսերը կատարվել են ոչ ֆինանսական ակտիվների իրացումից փաստացի մուտքերի հաշվին, որը կազմել է 4007983,8 հազար դրամ, կատարողականը կազմել է (-168.5)%:
- Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 446129,9 հազար դրամի դիմաց կազմել են 198665,9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 44,5%: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 82394,2 հազար դրամով:
- Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության գծով ծախսերը նախատեսված 1299614,7 հազար դրամի դիմաց կազմել են 330397,1 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 25,4%: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 12436,1 հազար դրամով:
- Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառով նախատեսված 559400,5 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 514611,7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 92,0%: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 8270,8 հազար դրամով:
- Կրթության բնագավառով նախատեսված 2849508,4 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 1952228,7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 68,5%: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 23716,8 հազար դրամով:
- Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 30000.0 հազար դրամի դիմաց կազմել են 3150,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 10,5%: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 22736,4 հազար դրամով:

Ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝

Ըստ տնտեսագիտական դասակարգման Վանաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսերը նախատեսված 9120726.6 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 1505571.1 հազար դրամ կամ կատարվել է 16.5%-ով, որից

- Վարչական (ընթացիկ) բյուջեի ծախսերը նախատեսված 5285335,6 հազար դրամի դիմաց կազմել են 3863870,4 հազար դրամ, կատարվել են 73,1%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են 400127,1 հազար դրամով:
- Ֆոնդային (ոչ ֆինանսական ակտիվների գծով) բյուջեի ծախսերը նախատեսված 7191651,2 հազար դրամի դիմաց կազմել են 1649684,5 հազար դրամ, կատարվել են 22,9%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 98342,7 հազար դրամով:
- Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի գծով նախատեսված (-3356260,2) հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են (-4007983,8)

հազար դրամ, կատարվել է 119,4%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են (-3325504,7) հազար դրամով:

- Աշխատանքի վարձատրության գծով նախատեսված 620958,6 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 614951,6 հազար դրամ, կատարվել են 99.0%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 107476,2 հազար դրամով:

- Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսված 792004,9 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 599051,7 հազար դրամ, կատարվել են 75,6%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 72471,3 հազար դրամով:

- Սուբսիդիաներ համայնքային կազմակերպություններին հոդվածով նախատեսված 2697135,5 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 2553416,4 հազար դրամ, կատարվել են 94,7%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 474825,8 հազար դրամով:

- Դրամաշնորհների գծով նախատեսված 160554,0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 10554,0 հազար դրամ, կատարվել են 6,6%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 107308,9 հազար դրամով:

- Սոցիալական նպաստների գծով նախատեսված 62043,0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 32122,8 հազար դրամ, կատարվել են 51.8%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 17293,6 հազար դրամով:

- Այլ ծախսերի գծով նախատեսված 952639,6 հազար դրամի (885921,6 հազար դրամը կազմում են պահուստային միջոցները) դիմաց ծախսերը կազմել են 53773,9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 5,6%: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 14898,9 հազար դրամով:

- Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նախատեսված 7191651,2 հազար դրամի դիմաց կազմել են 1649684,5 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 22,9%: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 98342,7 հազար դրամով:

Պարտքերը՝

Վանաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման արդյունքում առաջացել են 220086,1 հազար դրամի պարտքեր, որից 8472.8 հազար դրամը՝ վարչական բյուջեի գծով, 211613,3 հազար դրամը՝ ֆոնդային բյուջեի գծով:

Վ.Գրիգորյանը ներկայացրեց նաև Վանաձոր համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվությունը.

- **Վանաձոր համայնքի Ուսանողական, Շինարարների և Վ.Համաբարձումյան փողոցների հիմնանորոգում:** Պայմանագիրը կնքվել է 2025 թվականին, սակայն 2025 թվականին կատարողական չի արձանագրվել: Ծրագիրը տեղափոխվել է 2026 թվական:

- **Վանաձոր համայնքի Հրաչյա Ներսիսյան փողոցի 1-ին նրբանցքի հիմնանորոգում՝ ճանապարհային երկաթ բետոնե սալերի տեղադրմամբ:** Ծրագիրը տեղափոխվել է 2026 թվական:

Հ.Վիրաբյանը նշեց, որ խոսքը վերաբերում է Վանաձորի քարքարոտ փողոցին: Անցած տարվա տարեվերջին հայտարարվել է մրցույթ, սակայն մասնակից չի եղել: ՀՀ կառավարության որոշմամբ ծրագիրը տեղափոխվել է 2026 թվական, և մոտ օրերս մրցույթ կհայտարարվի:

- **Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի հիմնանորոգում** (Հայքի հրապարակից մինչեւ Թումանյան հրապարակ): Ծրագիրը տեղափոխվել է 2026 թվական:

- **Վանաձոր համայնքի թվով 50 բակերի հիմնանորոգում, խաղահրապարակների կառուցում:** Ծրագիրը տեղափոխվել է 2026 թվական:

- **Վանաձոր համայնքի կարիքների համար կոմունալ տեխնիկայի և ներհամայնքային ավտոբուսների ձեռք բերում:** Ծրագիրը տեղափոխվել է 2026 թվական:

- **Շահումյան բնակավայրի փողոցների լուսավորության համակարգի կառուցում:** Ծրագիրը տեղափոխվել է 2026 թվական:

- **Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի կոյուղատարի հիմնանորոգում, առաջնային մաքրման փոքր կայանի կառուցումով:** Ծրագիրը չի իրականացվել և հանվել է ծրագրից, քանի որ առաջացել են տեխնիկական խնդիրներ, որոնք հնարավոր չի եղել լուծել նախատեսված միջոցներով:

- **Վանաձոր համայնքի թիվ 7 տնակային մանկապարտեզի շենքի կառուցում:** Ծրագիրը տեղափոխվել է 2026 թվական:

- **Վանաձոր համայնքի թիվ 3 տնակային մանկապարտեզի շենքի կառուցում:** Ծրագրի մեկնարկը տրված է, ավարտը նախատեսված է 2026 թվականին:

- **Վանաձոր համայնքի կարիքների համար տեխնիկայի կայանատեղիի կառուցում /1-ին փուլ/:** Չի իրականացվել և հանվել է ծրագրից:

- **Վանաձորի «Ա.Ազարյանի անվան «Կենտրոն» համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի ներքին եւ արտաքին ենթակառուցվածքների վերակառուցում և վերանորոգում:** Չի իրականացվել և հանվել է ծրագրից:

- **Համայնքային նշանակության ճանապարհների հիմնանորոգում, նշագծում, կամուրջների հիմնանորոգում, լուսաֆորային օբյեկտների վերակառուցում:** Ծրագիրը ոչ սուբվենցիոն է և նախատեսված է բյուջեով: Բյուջեի կատարողականով տվյալ աշխատանքները իրականացվել են:

- **Աղբահանություն, կոմունալ ծառայություններ, մաքուր քաղաք:** Աշխատանքները կատարվել են:

- **Գետերի հուների մաքրում:** Աշխատանքները կատարվել են որոշակի տոկոսով:

- **Փողոցների լուսավորություն:** Աշխատանքները կատարվել են:

Հարց ու պատասխան

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամ Լուսինե Թադևոսյանը հարց հնչեցրեց այն մասին, թե փողոցների ընթացիկ փոսային նորոգումների հետ կապված արդյոք կա հասցեականություն, ընթացիկ հաշվետվության ձև:

Վ.Գրիգորյան - Բյուջեի կատարողականը չի ենթադրում հասցեական բնույթի աշխատանքներ, սակայն գրավոր դիմելու դեպքում Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և բնապահպանության բաժինը կտրամադրի բոլոր հասցեական տվյալները:

«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ նախագահ Գևորգ Քոթանջյանը հարց հնչեցրեց՝ նշելով, որ հունվարի 8-ին տեղի է ունեցել ձնամաքրման մրցույթ ՀՈԱԿ-ով և հետաքրքրվեց, թե ինչու են այդ աշխատանքները իրականացվել կոմունալ բաժնի աշխատակիցների անմիջական մասնակցությամբ:

Հ.Վիրաբյան – Տեխնիկական պայմանագրով սահմանված է, որ նշված մրցույթը պետք է կայանար այն դեպքում, երբ համայնքի սեփական ուժերով հնարավոր չլիներ կազմակերպել աշխատանքները: Տվյալ պահին իրավիճակը կառավարելի է եղել կոմունալ բաժնի աշխատակիցների կողմից: Եթե գա տարի, երբ ձյան տեղումները լինեն առավել ինտենսիվ, կառաջանա մրցույթ անցկացնելու անհրաժեշտություն: Նա հավելեց, որ մրցույթին նախատեսված գումարը պարտադիր չէ ամբողջությամբ ծախսել, քանի որ ծախսերը կատարվում են ըստ փաստացի կատարողականի և անհրաժեշտության:

«Ապրելու երկիր» կուսակցության ավագանու անդամ Արմեն Այվազյանը հարցրեց, թե անցած տարվա ավագանու կողմից հաստատած սուբվենցիոն ծրագրերից քանիսն են հաստատվել և փաստացի քանիսն են իրականացվել: Ինչպես նաև խնդրեց նշել, թե կոնկրետ որ գետերի հուներն են մաքրվել:

Վ.Գրիգորյան – 2025 թվականին հաստատված ոչ մի սուբվենցիոն ծրագիր նույն տարում չի ավարտվել: Երկու սուբվենցիոն ծրագիր է մեկնարկել, իսկ մյուսները՝ օբյեկտիվ պատճառներից ելնելով, չեն իրականացվել: Կան ծրագրեր, որոնց մրցույթներին մասնակից չի եղել, և կան ծրագրեր, որոնք տեղափոխվել են տարբեր պատճառներով: Նա ընդգծեց, որ նման իրավիճակը բնորոշ է ոչ միայն Վանաձոր համայնքին, այլ ամբողջ հանրապետությանը:

Հ.Վիրաբյանը հավելեց, որ օբյեկտիվ պատճառներից մեկն այն է, որ ըստ ընթացակարգի նախագծերը պետք է անցնեն փորձաքննության, և մոտ երեք անգամ մրցույթ է հայտարարվել, սակայն մասնակից չի եղել:

Ի պատասխան Ա. Այվազյանի հնչեցրած հարցի Վանաձոր համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Աստղիկ Ավետիքյանը թվարկեց գետերի անունները՝ Տանձուտ, Բզովդալ, Փամբակ, Խաչի ձոր իջնող գետակը՝ նշելով որ, դրանց վերաբերյալ բոլոր կատարողականները առկա են վճարումներ իրականացնելու համար:

Լ.Թադևոսյանը հարց բարձրաձայնեց թափառող շների ստերջացման գործընթացի վերաբերյալ՝ հետաքրքրվելով թե որ կազմակերպությունն է իրականացրել աշխատանքները և ինչ ծավալի աշխատանքներ են կատարվել:

Հ.Վիրաբյանը տեղեկացրեց, որ խոսքը վերաբերում է 515 թափառող կենդանիների: Մրցույթը շահել է «ՊԵԳԱՍ-2020» ՍՊԸ-ն: Մրցույթին մասնակցել է երկու կազմակերպություն, որոնցից «ՊԵԳԱՍ-2020» ՍՊԸ-ն առաջարկել է ավելի ցածր գին: Մրցույթում պարտված երկրորդ կազմակերպությունը նույնպես հայտ է

ներկայացրել՝ նշված աշխատանքներին ներգրավվելու նպատակով, և արդյունքում այն ևս մասնակցել է աշխատանքներին՝ բոլոր փուլերում համատեղ իրականացում ապահովելով: Միաժամանակ, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և բնապահպանության բաժինը վարում է համապատասխան փաստաթղթաշրջանառությունը և անկետաների վարումը:

Գ.Քոթանջյանը հարցրեց, թե ավագանու կողմից ծրագրեր ընդունելուց հետո ինչ ժամանակահատվածում են նախագծերը ուղարկվում ՀՀ կառավարություն՝ սուբվենցիան հաստատելու նպատակով: Նա նշեց, որ արդեն ուղարկվել են 50 բակերի փորձաքննության արդյունքները, սակայն մրցույթ դեռ չի հայտարարվել: Միաժամանակ անդրադարձավ բյուջեի կատարողականում նշված «Քույր քաղաքների հետ համատեղ ծրագրերի իրականացում» տողին՝ նշելով, որ այնտեղ հիշատակված Ստրազբուրգը, իր կարծիքով, Վանաձորի քույր քաղաք չէ և չպետք է ներառված լիներ կատարողականում:

Նա նաև անդրադարձավ սոցիալական ոլորտին վերաբերող տողին, որի համար հատկացվել է 30 մլն դրամ, սակայն ծախսվել է միայն 3 մլն դրամ: Նշվեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացված պատասխանի համաձայն՝ հանձնաժողովը փաստացի չի կարող գործել և լուծարման ենթակա է, իսկ հանձնաժողովի ստեղծումն ու գումարների ծախսումը հնարավոր էր միայն ավագանու համապատասխան որոշմամբ:

Վ.Գրիգորյանը նշեց, որ համայնքն ունի սոցիալական ծրագրեր, որոնց շրջանակում կատարում է որոշակի համաֆինանսավորում: Համագործակցության պայմանագրեր կան «Հայկական Կարիտաս» և «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ների հետ: Ծրագրերը թափանցիկ են, իսկ 3 մլն 150 հազար դրամը ծախսվել է համագործակցության արդյունքում:

«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ ծրագրերի համակարգող Արբակ Սարգսյանը հարցրեց, թե գետերի հուների մաքրման աշխատանքների քանի տոկոսն է իրականացվել:

Վ.Գրիգորյանը նշեց, որ մոտավորապես 30% աշխատանք է կատարվել, և պայմանագրով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ ընդունված են:

Քաղաքացիական պայմանագիր խմբակցության ավագանու անդամ Նոնա Հովհաննիսյանը հետաքրքրվեց երիտասարդական ծրագրերի իրականացման և ՀԿ-ներին աջակցության ուղղությամբ կատարված աշխատանքներով:

Հ.Վիրաբյանը նշեց, որ համայնքը երիտասարդական առանձին ծրագրեր չի իրականացրել, սակայն մասնակցել է մի շարք ծրագրերի: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունից մարզպետարանի միջոցով ստացված ծրագրերը իրազեկվել են հանրությանը, որպեսզի երիտասարդները կարողանան մասնակցել:

Ա.Այվազյանը հարցրեց, թե 3 մլն դրամը ինչ երիտասարդական ծրագրերի վրա է ծախսվել:

Վ.Գրիգորյանը նշեց, որ 2.900.000 դրամը տրամադրվել է երիտասարդական ՀԿ-ներին՝ նրանց դիմումների հիման վրա: Ծախսերը նախատեսված են բյուջեով՝ «Աջակցություն երիտասարդական ծրագրերի իրականացման» տողով:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Հարությունյանը նշեց, որ անցած տարվա բյուջեի շրջանակում խմբակցությունը ակտիվ մասնակցություն է ունեցել համայնքապատկան կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձերի բարձրացման գործընթացին և հայտնեց, որ համապատասխան գրությունը մուտքագրվել է՝ հաջորդ տարվա բյուջեում ևս նույն մոտեցումը պահպանելու նպատակով:

Ա.Այվազյանը շնորհակալություն հայտնեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Հարությունյանին աշխատավարձերի հարցը բարձրացնելու և համապատասխան գրությունը մուտքագրելու համար՝ նշելով, որ եթե ավագանու նիստում նույն նախաձեռնությունը կրկին ներկայացվի և խմբակցությունը կողմ քվեարկի, ինքը ևս կմիանա կողմ քվեարկությանը: Բացի այդ, նա առաջարկեց աշխատավարձերը բարձրացնել 40%-ով՝ նշելով, որ դա ավելի արդյունավետ կլինի սուբվենցիոն ծրագրերից որևե մեկի իրականացման փոխարեն և կծառայի որպես խթան՝ ավելի արդյունավետ աշխատանքի համար:

Վ.Գրիգորյանը ներկայացրեց աշխատավարձերի հնարավոր բարձրացման ընթացակարգը՝ նշելով, որ ավագանին պետք է հաստատի հաստիքացուցակները, որոշի բարձրացման տոկոսը, ընդունի տվյալ տարվա բյուջեն, ապա երկրորդ նիստով, պահուստային ֆոնդից կատարվի համապատասխան հատկացում: Այսինքն՝ անհրաժեշտ է առնվազն երկու նիստ:

Ա.Հարությունյանը խնդրեց մանրամասնել Վանաձոր համայնքի թվով 50 բակերի հիմնանորոգման ծրագրի ընթացքը:

Հ.Վիրաբյանը նշեց, որ ծրագիրը անցել է նախագծման և փորձաքննության փուլերը, ուղարկվել է մարզպետարան, որտեղ արձանագրվել են թեթև շտկումներ: Դրանից հետո նախագիծը վերադարձվել է նախագծող կազմակերպությանը, վերջինս պատրաստակամություն է հայտնել կատարել շտկումները, ինչից հետո այն կուղարկվի միջգերատեսչական հանձնաձողովի հաստատմանը:

Գ.Քոթանջյանը հարցրեց, թե արդյոք ամանորյա տոնակատարության զարդարանքների հետ կապված վճարում իրականացվել է:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և տուրիզմի հարցերի բաժնի պետ Քրիստինե Մադոյանը նշեց, որ ամանորյա միջոցառումների շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ կազմվել է արձանագրություն: Դեկտեմբերի 23-ի դրությամբ արձանագրվել է, որ

հաղթող կազմակերպությունը ոչ պատշաճ է իրականացրել զարդարանքների աշխատանքները, ինչի արդյունքում բաժնի կողմից տրվել է բացասական եզրակացություն, և համայնքի կողմից վճարում չի կատարվել և չի կատարվելու:

Ամփոփում՝

Հանրային լսման միջոցով ապահովվեց համայնքի շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը համայնքի ֆինանսական և ծրագրային գործունեության վերաբերյալ: Քննարկումն անցավ բաց և կառուցողական մթնոլորտում՝ հնարավորություն ընձեռելով մասնակիցներին ներկայացնել իրենց հարցերը, դիտարկումներն ու առաջարկությունները:

Հանրային քննարկումն ավարտվեց ժամը 12:40-ին:

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյանը, Վանաձոր համայնքի ղեկավարի խորհրդական Արեն Անանյանը, Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Աստղիկ Ավետիքյանը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր, տեղակալներ և բաժինների աշխատակիցներ, ավագանու անդամներ, «Հաշվապահ» ՀՈԱԿ տնօրեն Ռուզաննա Աբրահամյանը, «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ նախագահ Գևորգ Քոթանջյանը, «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ ծրագրերի համակարգող Արբակ Սարգսյանը և ՁԼՄ ներկայացուցիչներ:

Նախաձեռնող՝

Վանաձոր համայնքի ղեկավարի աշխատակազմի _____ Ա.Փելեշյան

Նիստը վարող՝

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ _____ Վ.Գրիգորյան